եղեալ զբանս անբանից կարօղ զձեզ վանելոյ, որով առաւել պարծին, քան պապանձին. այլ լինելով անյիշաչար թողուլ անյուշ. որք ահա շիկնին ըստ ինքեանց, եւ շիկնեսցին առ յապոյն անշէջ բոցով խղճի մտաց, իւրաքանչիւրքն կասկածեալ մի թէ ե՞ս իցեմ, մի թէ ե՞ս իցեմ. այսինքն ինքնանախատ կշտամբութիւն պապանձական ամօթհարութեամբ առաւել է քան դքրէական պատիժ՝ զոր կրեն. զմնացեալսն խոհեմութիւն քո իմաստասիրեսցէ։ Եւ ցայսօր ոչ մի ինչ վատաբանութիւն, այլ հռչակ բարեաց, անէծ պատճառ եղելոց, փափաքումն բղձագին անուանն լոյս, եւ ողբ կսկծանաց վասն բաժանման առնեն ամենայն, այլ զինչ քան զայս մեծ բարեբաստութիւն. իսկ եթէ անարգութիւն ինչ ի թշնամեաց այսուհետեւ շշնջիցի, իսկոյն գրեմ ձեզ. զի մինչ չեցէ առաջի բանակ թշնամեաց՝ ասպատակչաց ներկայութիւն, ընդ ո՞ր լինի մարտիւ հանդիպիլ. ահա զայսոսիկ ոչ համարձակեցայ գրել հայր վարդապետիս, դու որոճասցես եւ ծանուսցես, զի ընդ ձեր եւ զբարեհամբաւութեան ձերոյ կամիմ անմեռ կենդանութիւն։ Այլ եւ ամենայն ամիրայք, չէլէպիք, քահանայք, եւ բարեկամք համբոյր եւ սէր ընծայեն քեզ, զորոց անուանս եթէ գրէի, ոչ բաւէր հնդապատիկն թղթոյս. յատկապէս Տէր Գէորգն, Տէր Փիլիպպոսն, Տէր Ստեփանն, Տիրացու Գէորգն, թողում զայլս, զի եւ ժամանակն ահա ոչ ներէ. ամենեւին զառ իս գիրն քո յատուկ, եւ զհայր վարդապետինս իւր ստորագրութեամբ մի պակասեցուցանել աղաչեմ. զի եւ ես այնու միսիթարիցիմ. եթէ համայն գրեանս առ իս հասուցանել հաճիք, չէ ընդունայն, զի փութով հասուցանեմ ի տեսարս, զոր այլոց չէ փոյթ. եւ առ այժմ ոչ էր հարկաւոր այլ գրելի. այլ ողջ լեր ի Տէր Յիսուս ընդ բազում ժամանակս բոլորեալ ամաց ի հրճուանս նուաստութեան իմոյ,